

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



## ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)

№3 (17) 2010թ. ՓԵՏՐՎԱՐԻ 21 - ՄԱՐՏԻ 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



21 ապրիլի 2010թ.

[www.customs.am](http://www.customs.am)

բոլոր հարցերն  
ունեն իրենց  
պատասխանները՝

[www.taxservice.am](http://www.taxservice.am)

ևս մեկ քայլ՝

## ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ  
հրատարակվում են  
«Հարկատու» և «Մաքսատուն»  
ամսագրերը

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ</b>	<b>2</b>
1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	2
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	3
<b>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</b>	<b>5</b>
<b>3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</b>	<b>6</b>
3.1 Ծրագրեր և կատարողականություն -----	6
3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	7
3.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	7
3.4 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն -----	7
3.5 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	8

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	02 փետրվարի, 2010թ., ՀՕ-8-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 9 (743), 03.03.2010թ.
Ուժի մեջ է	04 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Կատարված լրացմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածում լրացվել են 8418 50 910 և 8418 61 001 ԱՏԳԱԱ-ներով՝ համապատասխանաբար սառնարանային սարքավորումների ներկառուցված այլ կա-

հույք՝ խորը սառեցման համար ու 3 կՎտ և ավելի արտադրողականությամբ ջերմային պոմպեր ապրանքատեսակները, որոնց ներմուծման և արտահանման համար սահմանվում է 0% դրույքաչափ:



## 1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 301 և 2007 թվականի N 1542-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18 փետրվարի, 2010թ., N 136-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 9 (743), 03.03.2010թ.
Ուժի մեջ է	04 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 1-ի «Հայաստանյան աղբյուրներից շահաբաժիններ ստացող ոչ ռեզիդենտի ռեզիդենտության պետությունում այդ եկամուտների մասով հարկման ենթակա չլինելու և այդ շահաբաժինների փաստացի սեփականատեր

հանդիսանալու մասին տեղեկանքը տալու կարգը և այդ տեղեկանքի ձևը հաստատելու մասին» N 301 և 2007թ. դեկտեմբերի 20-ի «Հարկման արտոնյալ ռեժիմներ ունեցող պետությունների կամ դրանց մասը կազմող տարածքների ցանկը սահմանելու մասին» N 1542-Ն որոշումները:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 471-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18 փետրվարի, 2010թ, N137-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 9 (743) 03.03.2010թ.
Ուժի մեջ է	04 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի «Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը

և տեղեկությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը և դրանք հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 471-Ն որոշումը:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	8 փետրվարի, 2010թ, N119-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (357), 01.03.2010թ.
Ուժի մեջ է	11 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույց»-ը՝ համաձայն հավելվածի:

Սահմանվում է, որ սույն հրամանի 1-ին կետով հաստատված՝ «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույց»-ի 5-րդ սյունակում նշված ժամկետները պայմանական են և ենթակա են փոփոխման՝ հաշվետվությունների ներկայացման ընթացակարգի օրենսդրական փոփոխության հնարավորության և փաստացի ժամկետների հետ:



Փաստաթուղթ	«Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	8 փետրվարի, 2010թ, N 120-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (357), 01.03.2010թ.
Ուժի մեջ է	11 մարտի, 2010թ.



### Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրնակելի ձևը՝ համաձայն հավելվածի: Հարկային մարմին դիմելու դեպքում հարկ վճարողների հետ կկնքվի սույն հրամանի 1-ին կետով սահմանված հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին օրնակելի ձևի պայմանագիր:

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 2009թ. հուլիսի 22-ի «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրնակելի ձևը հաստատելու մասին» N 1964-Ն հրամանը: Սահմանվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 2009թ. հուլիսի 22-ի N 1964-Ն հրամանի համաձայն կնքված պայմանագրերը գործում են մինչև համապատասխան պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը, և պայմանագրի գործողության ժամկետի սահմաններում հարկ վճարողների կողմից կարող են ներկայացվել հարկային մարմնի կողմից հաստատված ժամանակացույցում նշված հաշվետվությունների տեսակները:



որի գործողության ժամկետի ավարտը, և պայմանագրի գործողության ժամկետի սահմաններում հարկ վճարողների կողմից կարող են ներկայացվել հարկային մարմնի կողմից հաստատված ժամանակացույցում նշված հաշվետվությունների տեսակները:

Փաստաթուղթ	«Կազմակերպություններում ուսումնական պրակտիկայի ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար և նրանց կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 փետրվարի, 2010թ., N 2
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (357), 01.03.2010թ.
Ուժի մեջ է	11 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար և նրանց կողմից կազմակերպություններում ուսումնական պրակտիկայի ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարման վերաբերյալ ծագած հարցերի ճշտման նպատակով պարզաբանվում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների կողմից կազմակերպություններում ուսումնական պրակտիկա անցնող ուսանողները չեն դիտվում որպես չձևակերպված աշխատողներ և այդ ուսանողների համար

ու նրանց կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն կատարվում, եթե՝

1. բարձրագույն ուսումնական հաստատության և կազմակերպության միջև կնքվում է գրավոր պայմանագիր տվյալ կազմակերպությունում ուսումնական պրակտիկա անցնելու մասին,
2. ուսումնական պրակտիկան չի վերաբերում հետբուհական (ինտերնատուրա, օրդինատուրա, ասպիրանտուրա, դոկտորանտուրա և այլն) ուսուցմանը:


## 2. ՀԱՐԿԱՅԻՆ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04 փետրվարի, 2010թ., ՀՕ-13-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 10 (774), 10.03.2010թ.
Ուժի մեջ է	10 սեպտեմբերի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն է սահմանվում տրանսպորտային միջոց վարելու ուսուցման իրականացումը, որի համար տարեկան պետական տուրքը կազմվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով:

Նույն օրենքում կատարված փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվում 19-րդ հոդվածի 18-րդ կետի 18.13 ենթակետը, ըստ որի՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն էր սահմանվում տրանսպորտային միջոցների վարորդների ուսուցումը:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04 փետրվարի, 2010թ., ՀՕ-17-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 10 (774), 10.03.2010թ.
Ուժի մեջ է	30 մարտի, 2010թ.

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարվել են մի շարք լրացումներ, մասնավորապես՝ 4-րդ հոդվածում կատարված լրացմամբ ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Օրենքի 11-րդ հոդվածում կատարված լրացմամբ Հայաստանի Հանրապետության

յան քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ նշված ստուգման ընթացքում ստուգող անձի գործողությունները և ստուգման արդյունքում կազմված ակտը՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

### 3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

#### 3.1 | Ծրագրեր և կատարողականություն

##### 3.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

**1.** | ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 04.04.10թ. թիվ 416-Ա հրամանով հաստատվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչության հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերը: Սահմանվել է, որ ատեստավորման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել տվյալ պաշտոնի նկարագրից բխող պահանջներով: Հաստատված հրամանով նախատեսվում է նաև աշխատանքային ծրագրի կազմումը և կատարողականի գնահատումն իրականացնել տվյալ ստորաբաժանման համար սահմանված համապատասխան գործառույթների և հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրին համապատասխան:

**2.** | ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին օժանդակելու նպատակով 2010թ. մարտից իր խորհրդատվական աշխատանքներն է սկսել Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական հարկային ներկայացուցիչը: Ներկայացուցչի կողմից 4 շաբաթվա ընթացքում տրամադրված խորհրդատվության հիմնական շրջանակներ էին.

ԱԱՀ-ի վերադարձի հայտերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն,

- հարկային ստուգումների անցկացման կարգը և դրանց կարգավորման օրենսդրական շրջանակը,
- տեսչությունների կողմից անցկացվող որակյալ ստուգումներ՝ խնդիրներ և լուծումներ,

- հարկային խախտումների դեպքում կիրառվող պատժամիջոցներ,
- հարկային ծառայության կորպորատիվ կառավարում,
- ռազմավարական պլանավորման վերաբերյալ միջազգային փորձը:

ԱՄՅ հարկային մշտական ներկայացուցչի աշխատանքների 2-րդ փուլը կվերսկսվի 2010թ. ապրիլի 19-ից:

**3.** | ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 25-ի թիվ 185-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն ՀՀ պետական եկամուտների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրում: Որոշմամբ վերանայվել են ծրագրի միջոցառումները, կատարվել են խմբագրումներ, որոնք միջոցառումները դարձրել են առավել արդյունքային և չափելի, մի շարք միջոցառումների համար սահմանվել են ներկատնտեսական պայմաններին համահունչ ճշգրտումներ և առավել իրատեսական կատարման ժամկետներ: Միաժամանակ, ապահովվել է նաև միջոցառումների հավասարաչափ բաշխվածությունը ծրագրի իրագործման տարիների միջև: Մասնավորապես, ծրագրում կատարված փոփոխությունից հետո միջոցառումների ընդհանուր քանակը 95 է, որից 29.4% -ը ենթակա է իրագործման 2010թ. ընթացքում, իսկ 14.7% -ը՝ 2011թ. ընթացքում:

##### 3.1.2 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

2010 թվականի մարտի 1-4-ը Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խմբի, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և Զադաքական ու իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) կողմից համատեղ անց է կացվել թվով երկրորդ՝ ռիսկերի կառավարման թեմայով ուսումնական դասընթաց, որը հանդիսանում էր 2009թ. նոյեմբերին կազմա-

կերպված «Հետբացթողումային հսկողության հիմունքներ» դասընթացի շարունակությունը: 4-օրյա դասընթացում ընդգրկված էին այն մաքսային ծառայողները, որոնք պատասխանատու են հետբացթողումային հսկողության և ռիսկերի կառավարման ոլորտներում պարբերաբար իրականացվող աշխատանքների համար:



### 3.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.02.2010թ-ից մինչև 20.03.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են 6 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում 14 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.02.2010թ-ից մինչև 20.03.2010թ-ն ընկած ժամանակահատվածում քննարկ-

վել է 7 բողոք, որից՝

- բավարարվել է 1 բողոք,
- մերժվել է 6 բողոք:

20.02.2010թ-ից մինչև 20.03.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են 3 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, արդյունքում 7 մաքսային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

### 3.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

#### 3.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

ՊԵԿ համակարգում ընթանում է հարկային ծառայողների 2010թ. ատեստավորման գործընթացը: Օպերատիվ-հետախուզության վարչության հարկային ծառայողներից ատեստավորմանը մասնակցել են 187-ը, որոնցից 39-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկային ծառայության» մրցութային և ատեստավորման հանձնաժողովի եզրակացությամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նշված հարկային ծառայողներից 17-ը ազատվել է աշխատանքից, իսկ 22-ը՝ իջեցվել զբաղեցրած պաշտոնից: Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության հար-

կային ծառայողներից ատեստացիային մասնակցել են 86-ը, որոնցից 20 հարկային ծառայողներ ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկային ծառայության» մրցութային և ատեստավորման հանձնաժողովի եզրակացությամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 5-ը ազատվել է աշխատանքից, իսկ 15-ը՝ իջեցվել զբաղեցրած պաշտոնից:

2010թ. մարտի 16-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության 26 թափուր պաշտոնները համալրելու նպատակով: Մրցութային անց է կացվել 2010թ. ապրիլի 16-ին:

### 3.4 | Զետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

#### 3.4.1 | Զետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

2010թ. մարտ ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «թեժ գծով» ստացվել է 53 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզևավճարների տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, մարտի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի:

Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման

նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է Էլեկտրոնային հաշվետվություններին և հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.4.2 | Զետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

2010թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 20-ն ընկած ժամանակահատվածում «թեժ գծով» ստացվել է 300-350 զանգ, օրական միջինը՝ 10-15 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահ-

մանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Զաղաքացիներին, մասնավորապես, հետաքրքրել են ավտոմեքենաների և ծանրոցների մաքսագերծմանն առընչվող հարցեր:

**Նշված ժամանակահատվածում որևէ բողոք չի արձանագրվել:**

**3.5 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր**

3.5.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-փետրվար	փետրվար	հունվար-փետրվար	փետրվար	Հունվար-փետրվար	փետրվար
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	31.003	13.152	33.385	15.487	107.7	117.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	158.313	79.508	215.481	104.094	136.1	130.9
2.1	արտահանում (մլն դրամ)	25.953	14.573	47.074	25.825	181.4	177.2
2.2	ներմուծում (մլն դրամ)	132.359	64.934	168.407	78.269	127.2	120.5
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	5913	3438	4763	3075	80.6	89.4

3.5.1 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2010 թվական		
		Փետրվար	հունվար-փետրվար	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-փետրվար) %
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ԶՎԶՅ ստացած հարկ վճարողներ (թվաքանակ)	1633	2637	98.4
2	Զարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	34.258	63.146	128.3
2.1	ԱԱՀ	7.041	15.800	145.6
2.2	Շահութահարկ	6.587	11.077	125.3
2.3	Ակցիզային հարկ	431	1.081	164.6
2.4	Եկամտահարկ	6.204	10.648	140.3
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9.590	16.371	128.1
2.6	Այլ	4.405	8.168	96.2
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2035	2830	83.8
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1.405	1.823	68.6